ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

www.ytpc.am +374 11 472 760 | +374 11 472 771 mailbox@ytpc.am

N° Ահ/176-2024թ

28 03 2024թ./y.

ՈՐՈՇՈՒՄ N 3

«ԱԼԵՔՍ ՊՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

<u>Գործի նախապատմությունը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) 17.04.2024 թվականին կնքվել է «ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/7-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) 2-րդ, 3-րդ, 5-րդ, 7-րդ չափաբաժինների մասով, համաձայն որի Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չի մատակարավել 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքը՝ խողովակներ ABB Navigator 600 silica, Navigator 600 silica-յի համար նախատեսված տարեկան սպասարկման համար AW601176:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն Պատվիրատուի կողմից 2-րդ չափաբաժնի համար սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ՝ 10 օրացուցային օր,

սակայն Վաճառողի սահմանված ողջամիտ ժամկետում չի մատակարարել 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքը:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.4 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

Հիմք ընդունելով, որ «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 2.4.1, 2.4.2 և 2.4.4 կետերը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծել է «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/7-2» ծածկագրով Պայմանագիրը:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Մասնակիցն ընդգրկվում է Ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ

1. «Ալեքս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Որոշումը տրամադրվում է «Ալեքս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Վաճառողին

1. «Ալեքս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Որոշումը տրամադրվում է «Ալեքս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Վաճառողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ալեքս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-ի
Գլխավոր տնօրենի պ/կ՝

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Գլխավոր տնօրենի տեղակալ Ռ. Եղոյան
Կատարող՝ Իրավաբանական բաժնի պետ Ա. Զաքարյան
Հեռ. 011 47 27 60